

ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԱՆՈՎ ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր՝ ինովացիոն գործունեություն, ֆինանսավորման աղբյուրներ

Ինովացիոն գործունեության ֆինանսավորման գործուն համակարգի ապահովումը հիմնարար խնդիր է, որը հանդիսանում է ինովացիայի արդյունքի վրա ազդող ամենակարևոր գործոններից մեկը:

Ինովացիոն գործունեության ֆինանսավորման աղբյուրները բազմազան են՝ ինովացիոն ձեռնարկությունների, պետական բյուջետային և արտաբյուջետային, ապահովագրական ընկերությունների, մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների, ինչպես նաև անհատների ֆինանսական միջոցներ: Բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների դասական վարկային միջոցները հիմնականում չեն գործադրվում ինովացիաների ֆինանսավորման ուղղությամբ: Բանկերը, որպես կանոն, չեն մասնակցում ռիսկային ֆինանսավորումներին այն պայմանների հետևանքով, որ սահմանում են վարկի պարտադիր վերադարձելիություն և հստակ ժամկետներ, պահանջում են ապահովություն, հետաքրքրված չեն վարկառուի բարձր շահութաբերության ակնկալիքով, քանի որ հիմնականում օգտագործում են դասական վարկավորման մոտեցումը և ամրագրում են հստակ տոկոսադրույքներ:

Միևնույն ժամանակ “Ձեռնարկությունների Ինկուբատոր” հիմնադրամը Համաշխարհային Բանկի, Ֆինլանդիայի կառավարության և “Նոկիա” ընկերության հետ համատեղ իրականացնում է Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի ծրագիրը (mLab ECA), որը եզակի հնարավորություն է Հայաստանի և տարածաշրջանի մոբայլ ծրագրերի ոլորտը զարգացնելու և համաշխարհային շուկաներում ոլորտի մրցունակությունը բարձրացնելու համար:

Այս լաբորատորիան մի կենտրոն է, որտեղ տեղական և տարածաշրջանային ընկերությունների, տեխնիկական մասնագետների և փորձագետների համագործակցության արդյունքում մշակվում են տեղական շուկային և օգտագործողների պահանջներին համապատասխան մոբայլ աշխատանքային ծրագրեր:

mLab ECA ծրագիրը, հանդիսանալով Ֆինլանդիայի կառավարության և “Նոկիա” ընկերության “Կայուն գործարար միջավայր գիտելիքահենք տնտե-

սություներում” համատեղ ծրագրի մասը, ֆինանսավորվում է infoDev կազմակերպության կողմից, որը Գլոբալ գործընկերության ծրագիր է Համաշխարհային Բանկի խմբում¹:

Ժամանակակից պայմաններում առանձնացնում են ինովացիոն գործունեության ֆինանսավորման հետևյալ հիմնական աղբյուրները.

- բյուջետային հատկացումները,
- ֆինանսավորման հատուկ արտաբյուջետային ֆոնդերի միջոցները,
- կազմակերպության սեփական միջոցները,
- տարբեր առևտրային կառուցվածքների ֆինանսական ռեսուրսները,
- կառավարության կողմից հատուկ լիազորված ներդրումային բանկերի վարկային ռեսուրսները,
- պաշտպանական համալիրի գիտատեխնիկական և արտադրական կազմակերպությունների համար տրվող վարկերը,
- օտարերկրյա ներդրումները,
- ազգային և արտերկրի գիտական հիմնադրամների միջոցները,
- ֆիզիկական անձանց մասնավոր կուտակումները²:

Գոյություն ունի նաև բաժնետոմսերով ֆինանսավորում, որը հիմնականում կիրառում են այն ընկերությունները, որոնք կազմակերպվել են բաժնետիրական ընկերությունների ձևով, ինչը հնարավորություն է տալիս կուտակել ֆինանսական ռեսուրսներ ներդրողների լայն շրջանակներում բաժնետոմսեր տեղաբաշխելով:

Մասնագիտացված ֆինանսական միջնորդ կազմակերպությունները ի դեմս բիզնես-հրեշտակների և վենչուրային ընկերությունների, հանդիսանում են ինովացիաների ֆինանսավորման հիմնական աղբյուրներից մեկը: Պետության կողմից կարող են ձեռնարկվել մի շարք միջոցառումներ ուղղված ֆինանսական միջնորդության վերոնշյալ ձևերի զարգացմանը և սկզբնական փուլերի ֆինանսավորման ներգրավմանը: Հաշվի առնելով մասնավոր հատվածի սահմանափակությունը այս ոլորտում ու միևնույն ժամանակ մասնավոր ֆինանսավորման ներգրավման կարևորությունը, արդյունավետ պետական քաղաքականությունը դառնում է անհրաժեշտություն:

Վենչուրային /բարձր ռիսկային/ հիմնադրամները մասնագիտացված են ռիսկային ինովացիոն նախագծերի իրականացման համար ստեղծվող ինովացիոն կազմակերպությունների բաժնետիրական կապիտալում ներդրումներ կատարելու մեջ: Վենչուրային ֆինանսավորումը ծագել է նախորդ

¹ <http://ru.wikipedia.org>

² Ս.Ղանթարյան, Ինովացիոն մենեջմենթ - Երևան, 2007 թ.

դարի 70-80-ական թթ. և օգտագործվում է ռիսկային բնույթ կրող ինովացիաների ֆինանսավորման համար: Օգտագործվում է որպես երկարաժամկետ ներդրումների աղբյուր, որը տրվում է 5-7 տարվա համար խոշոր ձեռնարկությունների կազմում ինովացիաներ ներդնելու նպատակով: Վենչուրային կապիտալը ձևավորում է սահմանափակ պատասխանատվություն կրող ընկերությունների կազմի անդամների անձնական միջոցների հաշվին, թոշակային ֆոնդերից, խոշոր կորպորացիաների ազատ միջոցներից: Վենչուրային հիմնադրամի ռիսկը հենց այն է, որ 10 գաղափարից ընդամենը մեկը կարող է հաջողվել, սակայն մյուս 9-ը որևէ պարտավորություն հետագայում վենչուրային հիմնադրամի նկատմամբ չեն ունենում³:

Հայաստանում առաջին վենչուրային հիմնադրամը՝ Granatus ventures-ը, սկսեց իր գործունեությունը 2013 թվականի հոկտեմբերին: Այն ունի գրասենյակներ Հայաստանում, Լոնդոնում և Սինգապուրում: Հիմնադրամի կապիտալը կազմում է 6 մլն ԱՄՆ դոլլար, որի 50%-ը ֆինանսավորում է Հայաստանի կառավարությունը՝ Համաշխարհային բանկի “Էլ-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր” վարկային ծրագրի շրջանակում: Այդ գումարը վենչուրային հիմնադրամը պատրաստվում է ներդնել հայկական ստարտափներում (նորաստեղծ ընկերություններում), որոնք արդեն իսկ որոշակի ճանապարհ են անցել: Ընդ որում ֆինանսավորումից բացի տրամադրվելու է նաև մենթորական օժանդակություն (ուսուցում, խորհրդատվություն, ուղղորդում, կապեր ճիշտ մարդկանց հետ և այլն)⁴:

Արտասահմանյան ներդրումները ինովացիոն գործունեություն կարող են իրականացնել ինչպես գիտատեխնիկական և տնտեսական համագործակցության միջպետական, միջկառավարական ծրագրերի տեսքով, այնպես էլ արտասահմանյան ֆինանսային կազմակերպությունների և մասնավոր ձեռնարկատերերի մասնավոր ներդրումների ձևով: Հայաստանում կան մի շարք կազմակերպություններ, ովքեր աջակցում են նմանատիպ ֆինանսավորումների ներգրավման հարցում: Այդպիսի կազմակերպություն է “Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը”, որը 2011թ.-ից սկսած աջակցում է Հայաստանում ինովացիայի խթանմանը՝ նպատակ հետապնդելով մշակել ինովացիոն ՏՀՏ լուծումներ տարբեր բնագավառներում, այդ թվում նաև մասնավոր, պետական և սոցիալական ոլորտներում կիրառելու համար: Կենտրոնն աջակցում է ՏՀՏ ոլորտի գործող և նորաստեղծ ընկերություններին, մասնագետներին և ուսանողներին՝ բիզնես և տեխնոլոգիական խորհրդատվության,

³ www.weforum.org/issues/global-competitiveness

⁴ <http://www.mlabeca.com>

ֆինանսական և իրավաբանական օժանդակության տրամադրման, օգտակար կապերի հաստատման միջոցով, մասնավորապես՝

- Գաղափարի գեներացում և դրա կենսունակության գնահատում
- Ապրանքի/ծառայության նախատիպի մշակում և փորձարկում
- Ապրանքի/ծառայության իրացման բիզնես պլանի մշակում
- Օժանդակում տեղական և միջազգային շուկաներում առաջխաղացմանը

Խոշորամասշտաբ գիտատեխնիկական հիմնախնդիրների լուծումը ապահովող կարևորագույն ֆինանսական աղբյուր են պետական բյուջեի միջոցները: Այս միջոցների հաշվին կատարվում են նպատակային համալիր ծրագրեր, հիմնարար գիտական հետազոտություններ, ֆինանսավորվում է կադրերի գիտական որակավորման բարձրացումը, ինչպես նաև աջակցություն է ցույց տրվում գիտատեխնիկական ոլորտում ձեռնարկությունների փոքր ձևերի զարգացմանը:

2011-2012 թվականներին ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպվել և իրականացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի հայտերի մրցույթ՝ համաֆինանսավորման սկզբունքով, որին ներկայացված 43 նախագծերից 17-ը՝ 15 գիտական կազմակերպություններից ներկայացված և գիտության տարբեր բնագավառներին (բժշկագիտություն, գյուղատնտեսություն, կենսատեխնոլոգիա, մանուտեխնոլոգիա, քիմիա, ֆիզիկա, էլեկտրոնիկա, երկրաբանություն, նյութագիտություն, մեխանիկա) վերաբերող, երաշխավորվել են ֆինանսավորման, որի 85 տոկոսը տրամադրվել է պետական բյուջեի, իսկ 15 տոկոս՝ համաֆինանսավորումը՝ ոչ պետական կազմակերպությունների, պետական կազմակերպությունների արտաբյուջետային միջոցների կամ հիմնադրամների միջոցներով (344 194 մլն դրամ ընդհանուր արժեքով, որից 51 629,1 մլն դրամը ֆինանսավորվել է ոչ բյուջետային աղբյուրներից):

Արդյունքում, առաջին անգամ կիրառական գիտությունների շրջանակներում սկսվել է համագործակցություն ոչ պետական կազմակերպությունների հետ և, բացի պետական ֆինանսավորումից, գիտական ծրագրերի իրականացման նպատակով ֆինանսական ներդրումներ են կատարվել նաև մասնավոր հատվածի կողմից:

Ստացված արդյունքները գոհացուցիչ են: Անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ սրանք գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքներ են, որոնք անմիջական տնտեսական էֆեկտ չեն ենթադրում: Նպատակն ավելի շուտ տնտեսության պահանջարկի ուսումնասիրությունն է, տնտեսության կողմից գիտությանը տրվող պատվերների համակարգի ձևավորումը: Այսուհանդերձ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորված ծրագրերով մշակված որոշ տեխնոլոգիաների հիման վրա արդեն իսկ գործում են փորձնական արտադրություններ, օրինակ՝ քիմիայի կենսատեխնոլոգիայի ոլորտներում (“ԼԱ-2” ժանգի ձևափոխիչի ստացման տեխնոլոգիա, “Չորաթան” հայկական թթվակաթնային սննդանյութի ոչ սպիտակուցային ամինաթթուների փոքրածավալ արտադրություն: Վերը նշված մշակումների, արժեքայիններում ստեղծված մտավոր սեփականությունը (արտոնագրերը) կարող է դուրս բերվել շուկա՝ գիտատար նոր արտադրություններ հիմնելուն պատրաստ ներդրողներ ներգրավելու նպատակով:

2013 թվականին անցկացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների մրցույթ՝ մասնավոր հատվածի (ոչ պետական միջոցների) առնվազն 25 տոկոս համաֆինանսավորման պայմանով:

Արդյունքում ֆինանսավորվում են 16 նախագծեր, որոնց իրականացման արդյունքների կիրառության բնագավառները բազմազան են՝ գյուղատնտեսական մեքենաշինություն, բուսաբուծություն, ջրամատակարարման համակարգեր, առողջապահության կազմակերպման և կառավարման համակարգ, անասնաբուժություն, ջերմային և էլեկտրական էներգիաների արտադրություն, գիտական սարքաշինություն, արագացուցչային տեխնիկա, ինժեներային սեյսմաբանություն, երկրաֆիզիկական երևույթների հետազոտությունների ոլորտ, կանխագուշակման և տեղեկացման ծառայությունների ոլորտ, սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքների պլանավորման, արտակարգ իրավիճակների կառավարման և այլն: Նախագծերի ֆինանսավորման նպատակով տրամադրված պետական միջոցները կազմում են 282 369 հազ.դրամ, համաֆինանսավորումը՝ 107.636 հազ. դրամ⁵:

Պետբյուջեի միջոցները օգտագործվում են նաև գիտատեխնիկական ոլորտում փոքր գիտատար ֆիրմաների, բիզնեսի ինկուբատորների և այլ նմանատիպ ձեռնարկությունների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելու համար:

⁵ Գիտության պետական կոմիտեի տվյալները:

Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով Գյումրու տեխնոպարկի ծրագրի իրականացմանը պետական աջակցության կողմնորոշիչ չափաքանակ է սահմանվել 80 մլն դրամը⁶:

Լիզինգը և վենչուրային (ռիսկային) ֆինանսավորումը հանդիսանում են ֆինանսավորման հեռանկարային աղբյուրներ:

Լիզինգը, որպես ֆինանսավորման աղբյուր, ունի մի քանի առանձնահատկություններ՝

- Այն չի պահանջում կանխավճար, ինչը շատ կարևոր է նորաստեղծ ձեռնարկությունների համար:

- Լիզինգը նպաստում է հիմնական սարքավորումների փոխարինումը ժամանակակից սարքավորումներով, ինչը կրճատում է բարոյական մաշվածության ժամկետը:

Տարբերում են ֆինանսական և գործադրական (օպերատիվ) լիզինգ:

Ֆինանսական լիզինգի դեպքում լիզինգ տվողը վերադարձնում է իր սարքավորումների ամբողջ արժեքը, այսինքն ժամկետը, որով տրվում է լիզինգը, համընկնում է լրիվ անորտիզացիայի ժամկետների հետ: Գործադրական լիզինգի դեպքում պայմանագրի ժամկետը ավելի կարճ է, քան սարքավորման ծառայելու տնտեսական ժամկետը, այսինքն՝ օպերատիվ լիզինգի օբյեկտները դրանք այնպիսի սարքավորումներ են, որոնց բարոյական մաշվածության ժամկետը կատարվում է շատ արագ: Դա հնարավորություն է տալիս լիզինգ տվողին նույն սարքավորումը տալ լիզինգի մի քանի անգամ:

⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=51342>

**ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՐՔՈՒՐՆԵՐԸ
ԱՃՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ**

Բանալի բառեր՝ ինովացիոն գործունեություն, ֆինանսավորման աղբյուրներ

Գիտության և տեխնիկայի նվաճումները տնտեսության իրական հատվածում օգտագործելու անհրաժեշտ պայման է տնտեսվարող սուբյեկտի ինովացիոն գործունեությունը: Տնտեսական անցումը նոր որակական վիճակի ավելի մեծ չափով է բարձրացրել ինովացիոն գործունեության ակտիվացման, երկրի ինովացիոն ներուժի ձևավորման մշակույթը, ինչն էլ թույլ կտա վերակազմավորել տնտեսությունը, արագացված ձևով զարգացնել գիտատար արտադրությունը:

**ИСТОЧНИКИ ФИНАСИРОВАНИЯ ИННОВАЦИОННОЙ
ДЕЯТЕЛЬНОСТИ**

Анна АЙВАЗЯН

Ключевые слова: инновационная деятельность, источники финансирования

Инновационная деятельность субъекта хозяйствования является необходимым условием для применения достижений науки и техники в реальной отрасли экономики. Переход экономики на качественно новый уровень еще более поднял культуру активизации инновационной деятельности и формирования инновационного потенциала страны, что даст возможность перестроить экономику, ускоренными темпами развить наукоемкое производство

ISSUES RELATED TO FINANCING INNOVATIVE ACTIVITIES

Anna AYVAZYAN

Key words: innovative activities, sources of financing

Innovation activity of a business entity is a necessary term for the application of scientific and technical achievements in the field of economy. The transition of the economy to a new qualitative level has more increased the culture of the formation of innovative potential of the country, activation of innovative activity, which will give opportunity to rebuild the economy, to develop rapidly high-tech production.